



**ՀԱՆԳԻՄ
Տ. ՆՈՐԱՅԻ ԱՐքԵՊՈՍ. ՊՈՂԱՐԵԱՆԻ
ՄԻԱԲԱՆԻ
ՈՒԽՏԻՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ
(1804- 1996)**

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ «Սիոն» ամսագրի խմբագրութիւնը խոր սուգով կը գուտեն մահը Գերաշնորհ Տ. Նորայր Արքեպոս. Պողարեանի, որ հանգեաւ ի Տէր 19 դեկտեմբեր 1996, հինգչարթի ժամը 10:30-ին, Երուսաղէմի Ֆրանդանոցին մէջ:

Իրմով Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին եւ ի մասնաւորի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կը կորսնցնեն բազմավաստակ, լուսամիտ եւ ներհուն հոգեւորական մը, որ իր ամբողջ կեանքը ի սպաս դրաւ Աստուծոյ եւ իր ժողովուրդին ծառայութեան:

Իր մահով կ'ողբանք կորուստը վաստակաւոր ուսուցչին եւ եկեղեցւոյ կարգին բազմահմուտ վարդապետին, որ եօթը տասնամեակէ աւելի երկարաձգուող ժամանակի ընթացքին Դուրեանի եւ Կիւլէսէրեանի Հայեցի շունչին տակ ստացած իր ուսման սէրը եւ իր իսկ ջանքերով ամբարած գիտութիւնը փոխանցեց նորահաս սերունդներուն, որոնց իրենց կարգին լծուեցան եկեղեցւոյ գործին եւ ազգային ծառայութեան:

Կ'ողքանք կորուստը «Սիոն» ամսաթերթի երկարամեայ աշխատակիցին, որ ժրաջանօրէն պեղեց մեր մշակոյթի գանձերը եւ հանրութեան սփականութիւն դարձուց զանոնք. «Սիոն» ամսագրի նոր շրջանի սկզբնական թիւերէն սկսեալ երեւցան անոր բովանդակալից կրօնական, գրական եւ բանասիրական յօդուածները, որոնք մեծապէս գնահատուեցան:

Կը սգանք մահը հաւատաւոր հինաւուրց միաբանի մը, որ առանց դժկամակութեան եւ անթերի կերպով կատարեց իր վրայ դրուած բոլոր պարտականութիւնները մայրավանքէն ներս եւ Սուրբ Տեղեաց մէջ. Ազգային իրաւունքներու ի խնդիր բազմաթիւ դժուարութիւններու դէմ մաքարող եռամեծար Պարոնտէրներու եւ Շնթայակիրներու օրինակին հետեւելով՝ ան ամէն կերպով արժանի դարձաւ դասակիցը ըլլալու այն նուիրեալներուն, զորս ինք կը կոչէր «Սիոնի որդիք»:

Կ'ողքանք նաեւ կորուստը մեծ բանասէրին, որ առանձինն կատարեց մի քանի տասնեակ գիտնականներու գործը՝ ցուցակագրելով տասնմէկ մեծադիր հատորներու մէջ Սրբոց Յակոբեանց ձեռագրատան հազարաւոր գըշագիր մատեանները. Այդ կոթողական աշխատանքին առընթեր ան մոռացութենէ փրկեց բազմաթիւ նիւթեր մեր մշակոյթի պատմութեան վերաբերեալ, որոնցմէ ոմանք լոյս ընծայեց հատորներով իսկ մնացեալներուն անդրադարձաւ յօդուածներով: Իր աշխատասիրութեանց երկար շղթային օղակները կը կազմեն մատենագիրներու, աշուղներու, գրիչներու, վանքերու,

վաւերագրերու, ծիսագիտութեան, կանոնագիտութեան եւ այլ նիւթերու նուիրուած ուսումնասիրութիւններ, զորս միայն իրեն նման մեթոտիկ աշխատասիրող մը կրնար լոյս ընծայել:

Նորայր Սրբազն մեկնեցաւ այս աշխարհէն լի աւուրբք: Կ'աղօթենք որ Տէր Աստուած իր Արքայութեան լոյսերուն արժանի ընէ անոր հոգին եւ անոր օրինակելի կեանքին հետեւողներ ընծայէ ի փառս Անուան իւրոյ:

«Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(1991 - 1991)